ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

ՀՀ-ում ստվերային տնտեսության նվազեցման գործում կարևորվում է ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը: Ցանկացած տնտեսության «քաոսային, չկանխատեսվող և տարերային» զարգացման առաջնային մեխանիզմը ստվերային տնտեսությունն է, ինչն առաջացնում է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներ, ինչպիսիք են՝ եկամուտների և կապիտալի անհավասարաչափ բաշխումը, ոչ ֆորմալ զբաղվածությունը, խորացող աղքատությունն ու բնակչության արտագաղթը: Ուստի, ստվերային տնտեսության դեմ պայքարը կազմակերպելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել կառավարման արդյունավետ գործիքակազմ:

Ատենախոսությունում վերլուծվել են ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները, հատկապես, շեշտադրվել են այն դրդապատճառները, որոնք առաջանում են տնտեսվարող սուբյեկտների մոտ ստվերային գործարքների նկատմամբ հակվածություն և որի հիման վրա մատնանշվել են տնտեսության հիմնական բացթողումները, որոնք առաջացնում են ստվերային տնտեսության մասշտաբների ընդլայնում, և որպես բացասական հետևանք՝ բնակչության կենսամակարդակի նվազեցում: Իհարկե, բազմաթիվ աշխատանքներ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից, ուղղված ստվերային տնտեսության մասշտաբների գնահատմանը, սակայն ստվերային տնտեսության ճշգրիտ գնահատական տալը բավականին բարդ է:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է նշված, ինչպես նաև դրանց հետ առնչվող մի շարք այլ հիմնախնդիրների ուսումնասիրությանը, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Հետազոտության **նպատակն է** բացահայտել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների ու բնակչության կենսամակարդակի փոխազդեցության հիմնախնդիրները:

Նշված նպատակի իրականացման համար հետազոտության ընթացքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրանց դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում,
- իրականացնել գործոնային վերլուծություն ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ,
- գնահատել MIMIC մեթոդով ստվերային տնտեսության նախադրյալների ձևավորման հիմքերը,
- մշակել ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմներ,
- առաջարկել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման մոտեցումներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքը, ձևակերպված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև

ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների առաջացման տեսամեթոդաբանական հիմքերը**» գլխում ներկայացված են ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրանց դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ինչպես նաև ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գործոնային վերլուծությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ստվերային տնտեսության և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում»** գլխում ներկայացվել են ստվերային տնտեսական գործունեության ծավալների գնահատումը, որն իրականացվում է նաև մոնետար մեթոդի այլ մոտեցումների միջոցով, մասնավորապես՝ էկոնոմետրիկ մեթոդներով, որտեղ ստվերային տնտեսությանը նպաստող գործոններից առանձնացվել են՝ աշխատուժի կառավարման մակարդակը և ինքնազբաղվածության մակարդակը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ստվերային տնտեսության նվազեցման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում գնահատվել են էլեկտրաէներգիայի սպառման ճկունության գործակիցներն ըստ ՀՆԱ-ի, ցույց տալով Հայաստանի Հանրապետությունում ստվերի առաջացման պատճառները էլեկտրաէներգիայի ծավալից կախված, հիմք ընդունելով Կաուֆման-Կալիբարդիի մեթոդը:

Ատենախոսությունում ստացված արդյունքների հավաստիությունը

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել ստվերային տնտեսության վերաբերյալ տարբեր տնտեսագետների մենագրությունները, գիտական հոդվածները և միջազգային կազմակերպությունների զեկույցներ:

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության, հարցումների մեթոդներ և գործիքներ:

Աշխատանքի գիտական նորույթը

Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տնտեսական և գործնական նշանակության արդյունքներ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. MIMIC գործիքակազմի միջոցով գնահատվել է ստվերային տնտեսության չափն՝ ըստ՝ աշխատուժի կառավարման մակարդակի, ինքնազբաղվածության, անվանական ՀՆԱ և կանխիկ փողի, ինչպես նաև՝ առաջարկվել են միջոցառումներ ուղղված ստվերային տնտեսության կրճատմանը բնակչության կենսամակարդակի բարելավման գործում:
2. Կաուֆման-Կալիբարդիի մեթոդի հիման վրա գնահատվել և բացահայտվել են ՀՀ-ում ստվերային տնտեսության չափը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի սպառման և իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի:
3. Սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների՝ հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում, բացահայտվել են ստվերի առաջացման նախադրյալները և դրանց նվազեցման միտումները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Տեսական հարցադրումների մեջ հեղինակն առավել մեծ մասնաբաժին է հատկացրել տնտեսության ստվերայնության հարցերին, իսկ բնակչության կենսամակարդակի հատվածը գրեթե բաց է մնացել կամ կատարվել է շատ չնչին անդրադարձ, իսկ ատենախոսության վերնագրի տրամաբանությունը ենթադրում էր երկու հատվածներին առնչվող հավասարակշռված մոտեցում: Մյուս կողմից, աշխատանքի առաջին գլխում հեղինակը չի ուսումնասիրել առանձին երկրների միջազգային փորձը, որն առնչվում է ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխկապվածության կառավարմանը, և տեսական հարցադրումների այս բաղադրիչը շարունակվել ու տեղ է գտել երկրորդ գլխի 2.1 ենթակետում (33-39 էջեր), այնինչ դա կարելի էր ուսումնասիրել 1.3 ենթակետով:
2. Աշխատանքն ավելի մեծ գիտական արժեք կունենար, եթե ՀՀ տնտեսության ստվերայնության ուսումնասիրությունը կատարվեր ելնելով ՀՀ բնակչության քվինտիլային կամ դեցիլային եկամտային խմբերի հիման վրա, այդ մոտեցումը

հնարավորություն կտար բացահայտել ստվերայնության մակարդակը եկամտային առանձին խմբերում՝ անհամաչափությունների տեսանկյունից, ինչպես նաև ստվերայնության առանձին տեսակներից ելնելով: Նման մոտեցում կարելի էր կիրառել նաև ըստ կազմակերպությունների չափերի և ստվերային գործունեության առանձնահատկություններից ելնելով, քանի որ ստվերային գործունեության ծավալելու դրդապատճառներն ըստ առանձին կազմակերպությունների չափերի տարբեր են և եթե ՓՄՁ-ները դրանով լուծում են գոյության խնդիր, ապա խոշորների համար դա լրիվ այլ նպատակ է հետապնդում:

3. Աշխատանքում ուսումնասիրվել է բնակչության կենսամակարդակին առնչվող միայն Մարդկային զարգացվածության համաթիվը (ինդեքս) (HDI), իսկ մյուս համաթվերին պատշաճ ուշադրություն չի դարձվել, այնինչ կան մի շարք այլ կենսամակարդակը բնութագրող՝ կյանքի որակի, երջանկության, ենթակառուցվածքների զարգացվածության համաթվեր ևս, իսկ մյուս կողմից թեմային են առնչվում նաև Ստվերային տնտեսության համաթվերը, Կոռուպցիայի ընկալման համաթվը, Կաշառք վճարողների համաթիվը և այլն:
4. Աշխատանքում ներկայացված մոդելների վերլուծության համար անհրաժեշտ թվային տվյալների բազաները ներկայացված չեն (հավելվածում ոչ լիարժեք), տեքստային մասում որոշ վիճակագրական տվյալներ սահմանափակվում են 2018թ.-ով, իսկ երբեմն էլ՝ 2017 կամ 2016 թվականներով: Եվ անգամ չեն հանդիպում լիարժեք թվային տվյալներով աղյուսակներ, որտեղ տարբեր գնահատականների հիման վրա նշված լինի ՀՀ տնտեսության ստվերայնության մակարդակը, որից ելնելով պետք է որ ատենախոսը դուրս բերեր բնակչության կենսամակարդակի կառավարման մեխանիզմները:
5. Աշխատանքում շատ դեպքերում օգտագործվում են տերմիններ, որոնք ունեն իրենց հայերեն համարժեքները, ինչպիսիք են օրինակ՝ ֆորմալ՝ ձևական, կենսացիկլ՝ կենսապարբերաշրջան, ինդեքս՝ համաթիվ և այլն: Մյուս կողմից աշխատանքում առկա են նաև որոշ տեխնիկական թերություններ, պետական կառավարման մարմինների հին անվանումներ (էջեր 5, 40, 41), օրենքներին առնչվող պաշտոնական տեղեկագրերի վերաբերյալ տվյալները լիարժեք չեն ներկայացվել և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Լ. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, ամփոփ և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Ատենախոսը դրսևորել է մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում են ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են 7 գիտական հոդվածներում, իսկ սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ հանրային կառավարման մարմինների կողմից ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի վրա դրա փոխազդեցության կապերի բացահայտման ժամանակ:

Այսպիսով՝ *Լիլիթ Մանվելի Պետրոսյանի «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում»* թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան

Վ.Վ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ս.Հ. Պողոսյան

19.06.2020թ.